«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Սաթենիկ Փարսադանյան

Ուսումնական հաստատություն՝ Շնողի Հ. Մելիքսեթյանի անվան միջն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- էջ 3

Հետազոտության հարց ---------- էջ 6

Նպատակ ----------էջ 9

Եզրակացություն ---------- էջ 16

Գրականության ցանկ ---------- էջ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լորենցո Քուինի «Բնության ուժը»

Բնության պահպանությունը մարդկության գլխավոր հիմնախնդիրն է:

Ի՞նչ է բնությունը:

«Բնությունն այնպես է ամեն բանի մասին հոգացել, որ դու ամեն ինչից ու ամենուր սովորելու բան ունես»:

Լեոնարդո Դա Վինչի

Բնությունն այն է, ինչը մեզ շրջապատում է, բայց չի ստեղծվում մարդու կողմից[1]…

Բնությունը մշտապես շարժվում է և զարգանում, ընդգրկում անօրգանական և օրգանական աշխարհները: Անօրգանական աշխարհին են պատկանում տիեզերական մարմինները, ջուրը, հողը, օդը, ապարները, օգտակար հանածոները: Բուսական և կենդանական օրգանիզմների ողջ բազմազանությունը կազմում է օրգանական աշխարհը:

Ժամանակակից դպրոցի կարևոր խնդիրներից մեկը բնության հանդեպ վերաբերմունքի ձևավորումն է, որը ձևավորում է անհատի արժեհամակարգը, բարոյական որակները և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա, խթանում է էկոլոգիական գիտակցությունը, ինչպես նաև զարգացնում է տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում,սովորողների մոտ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում կապ է ստեղծվում հասարակության՝մարդու և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ սովորողը՝ այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա

https://www.youtube.com/watch?v=qE98fT6Ok1o

միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:
Սովորողները ծանոթանում են բնապահպանության առջև ծառացած խնդիրներին: Իմացական գործունեությանը խթանում են այնպիսի իրավիճակներ,որոնք նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու միջոցով: Անհրաժեշտ է նաև ուսուցանվող նյութը մատուցել կիրառելի այնպիսի մեթոդներով,որը պահանջում է վերլուծում և համադրում,կարևորում է բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, փաստերի,էքսկուրսիաների, կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:
Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը՝ «Ծաղկազարդ», «Կանաչ անկյուն», «Լսի՛ր, ինչ է պատմում տերևը»,«Պահպանի՛ր բնությունը»,«Հայրենի բնաշխարհի գանձերը», «Մենք և տիեզերքը», «Մարդը բնության զավակն է» ... միջոցառումներ: Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ: Երեխաները ակտիվորեն մասնակցում են տարբեր բնույթի միջոցառումներին, դիտարկումներին և մրցույթներին:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի մեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերու-թյունների ձևավորմանը: Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները:

Բնության, շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքով կարելի է ամբողջական պատկերացում կազմել տվյալ հասարակության մասին: Թե որքանով է այն գրագետ ու կիրթ, գիտակից ու խելացի, զուսպ և հայրենասեր: Թե ինչ վերաբերմունք ունի սերունդների, ապագայի, սեփական պետության նկատմամբ: Երեխային սիրելը նրան ժառանգություն թողնվելիք բնության հանդեպ ցուցաբերած խնամքով ու հոգածությամբ պարուրելն է: Բնության հանդեպ վերաբերմունքջևավորելն է դեռ վաղ հասակից: Տարիքային առանձնահատկությունների բերումով երեխաների մոտ հուզականորեն է ընկալվում բնության գեղեցկությունն ու անկրկնելիությունը, հաճախ շնչավորում է նույնիսկ անշունչ առարկաներն ու բնության երևութները: Նա պատրաստ է բնության ցանկացած փոքրիկ էակի մեջ տեսնել բնության ամբողջականությունն ու գեղեցկությունը: Երեխայի աշխարհճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից, հաճույքով ուսումնասիրում է իրեն շրջապատող կենդանիներին և բույսերը, փորձում հասկանալ նրանց կենսակերպի առանձնահատկությունները և էական տարբերությունները մարդկանցից:

Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցահասակի անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է:

https://www.youtube.com/watch?v=PHZ5t5UB5Wg&t=21

Էկոլոգիական գործունեության շնորհիվ երեխայի մեջ ձևավորվում են բնության և ռեսուրսների նկատմամբ խնայողական վերաբերմունք և ճիշտ վարքագիծ: Բնության հանդեպ վերաբերմունքը երեխաների մոտ ձևավորում է էկոլոգիական աշխարհայացք, զարգացնում դրական հուզական, արժեքային վերաբերմունք բնական միջավայրի նկատմամբ: Առաջադրանքների միջոցով ձևավորվում է գիտելիքները բնության մասին, դրա նկատմամբ զգույշ և հոգատար վերաբերմունք; Զարգանում է երեխաների ստեղծագործական ունակությունները, արագ սրամտությունը, դրանց ժայթքումը, դաստիարակում սեր և հարգանք բնության և բնական միջավայրում գեղեցիկին տեսնելու և արձագանքելու կարողություն:[1]

Հիմա ամբողջ մոլորակը խոսում է այն մասին, թե որքան վատ է մեր էկոլոգիան, որ այն պետք է փրկել:

1 https://www.youtube.com/watch?v=jJ6d4maHjoE

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ՝ ՇՆՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԸ ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴՅՈՔ ՀԱՆԴԻՍԱՆԱ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Հայաստանը լեռնային երկիր է, որը բնութագրվում է բույսերի և կենդանիների տեսակների, ինչպես նաև լանդշաֆտների և բուսականության տիպերի հարուստ բազմազանությամբ: Բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ, որպես հազվագյուտ և անհետացման եզրին կանգնած տեսակներ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում: Հայաստանում տարբերվում են չորս կատեգորիայի բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ պետական արգելոցներ, բնության հուշարձաններ, ազգային պարկեր և արգելավայրեր: Պետք է լինել բնության բարեկամ, ծանոթանալ բնությունը պահպանելու կանոններին, ինչպես նաև կանխել կենդանիների, թռչունների, միջատների և բույսերի բազմաթիվ տեսակների անհետացումը: Վաղ հասակից պետք է երեխաներին տեղեկացնել, որ «Կարմիր գրքում» ընդգրկվում են հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, թռչունների, միջատների և բույսերի բազմաթիվ տեսակներ: Քանի որ, մարդու գործունեության արդյունքում սպանվում են բազմաթիվ կենդանիներ, կտրվում են բազմաթիվ ծառեր, վերացվում են բազմաթիվ բույսեր, ինչպես նաև աղտոտվում են օդն ու ջուրը, այդ իսկ պատճառով դեռ մանկուց պետք է զարգացնել սեր դեպի բնությունը: Ծնողների խնդիրն է երեխաներին հասկացնել, որ մեզանից յուրաքանչյուրը անհատապես պատասխանատու է Երկրի համար, և յուրաքանչյուր ոք կարող է պահպանել և կատարելագործել բնության գեղեցկությունը:

Մենք ապրում ենք Լոռվա չնաշխարիկ բնության մի գողտրիկ անկյունում՝ Շեն հողում՝ Շնողում:[1]Շնողի պատմությունը սերտորեն առնչվում է վաղ միջնադարյան Կայծոն ամրոցի հետ: [2]

Շուրջպարի բռնած սարերի գրկում,

Խրորտ ժայռերին դու ապավինած

Արևահամ մրգերով բազում

Այգիներ ունես դու գոտեվորած:

Դու ջուր ես առնում ծերուկ Դեբեդից

Ով խինդ ես բերում բերրի հողերիդ,

Այգիներում քո շողված արևով

Գույներ են առնում մրգերդ բոլոր:

Դու առատության սեղան ես բացված,

Ուր եգն ու տաղը գովքից են հյուսված:

[1]https://hy.wikipedia.org/wiki/%D5%87%D5%B6%D5%B8%D5%B2_(%D4%BC%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82_%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6)

2 https://www.facebook.com/watch/?ref=search&v=213514976414584&external_log_id=2744029f-2589-4c4d-a474-46bd9538ed8b&q=%D5%B7%D5%A5%D5%B6%20%D5%B7%D5%B6%D5%B8%D5%B26

Ծլում ես, ծաղկում քո շեն հողերով,

Քաջ ու նվիրված քո զավակներով:

Քո սիրավ տարված, հարազատ Շնող,

Քո գովքն եմ երգում մի անհուն սիրով,

Բերքի ու հույսի ազնիվ իմ ծնող:

Այս օրհներգը որպես աղոթք հնչում է ամեն շնողցու շուրթերից:Մեծ ու անգնահատելի է նրա սերը առ հայրենի գյուղը:Շնողցին ամուր արմատներով է հյուսված իր շեն հողին,սառնորակ աղբյուրներին, սարերի հովին,սաղարթախիտ անտառներին,ցորյանի արտերին: Նա հպարտ է իր ազգային արժեհամակարգի սկզբնաղբյուր հանդիսացող Շնող գյուղով:



Շնողցին նաև արդյունաբերող է: Այստեղ է գտնվում «Թեղուտ Մայնինգ» ՓԲԸ –ն ,որը կարևոր արդյունաբերական կենտրոն է:Աշակերտները տեսել են մոլիբդենի արտահանումը բաց հանքերից,նրա մշակումը գործարանում,պոչամբարի վերամշակման գործընթացը, հատված անտառները, կիսված սարերը: Միևնույն ժամանակ մասնակցել են ընկերության կազմակերպած ծառատունկերին,շաբաթօրյակներին,բնապահպանական այլ միջոցառումներին: Հատկապես հետաքրքրեց միջնադարյան գտածոները:Նրանք փոքրիկ բնապահպաններ են,ովքեր պատրաստ են շենացնել իրենց մի բուռ հայրենիքը:

Համայնքը երեխայի մեջ ձևավորել է ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

Մարդկության համար մեր ամբողջ հսկայական և միևնույն ժամանակ փոքր Երկիր մոլորակը տունն է: Հիմա մեր բնական տունը վտանգի տակ է: Խնայելու համար յուրաքանչյուր մարդ պետք է գոնե մի քիչ բնապահպան դառնա: Այնուհետև ամբողջ հասարակությունը կապրի բնության հետ ներդաշնակ և համատեղության մեջ: Բնապահպանությունը մեզ սովորեցնում է հոգ տանել մեր շրջապատի աշխարհի մասին ՝ Երկրի տնային մոլորակի մասին:[1]

[1] https://www.youtube.com/watch?v=wnF4o7hg7Ss

ՆՊԱՏԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ՈՒ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՈՒՄ

Երեխայի աշխարհաճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից: Դպրոցականը հաճույքով ուսումնասիրում է իրեն շրջապատող կենդանիներին և բույսերը, փորձում հասկանալ նրանց կենսակերպի առանձնահատկությունները և էական տարբերությունները մարդկանցից:

- Էկոլոգիական դաստիարակությունը շատ կարևոր է մոլորակի և մարդկության համար, քանի որ մարդկության անհեռատես գործունեության արդյունքում հասարակությունը և մոլորակը կանգնած են աղետի առաջ:

- Այսօր մենք կարևորում ենք էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական գիտակցություն ձևավորոումը, որը պետք է սկսել վաղ տարիքից: Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման մեջ կարևոր դեր պետք է գրավի բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը:

- Բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները ենթադրում են. ծանոթացնել երեխաներին բնության հետ, սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ: Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը»գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև:

Բնության հանդեպ վերաբերմունքի ձևավորման նպատակն է.

- զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է

- ձևավորել էկոլոգիական աշխարհայացք

- ձևավորել գիտելիքներ բնության մասին, դրա նկատմամբ զգույշ և հոգատար վերաբերմունք

- գիտակցել բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենալ բնական պաշարների հանդեպ

- ձևավորել պատասխանատու վարքագիծ բնության հանդեպ

- ձևավորել հետաքրքրասիրություն բնության նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ:

Հետազոտության նպատակին հասնելու համար անհրաժեշտ էսովորողների մոտ ձևավորել բնության հանդեպ ճիշտ վերաբերմունք, որի ուսուցման ժամանակ անհրաժեշտ է եղել լուծել հետևյալ խնդիրները.

- կրթական՝ գտնել համակարգի բնապահպանական խնդիրների մասին և առաջադրել արդի լուծման ճանապարհներ
- զարգացող՝ զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության զարգացման համար:

https://www.youtube.com/watch?v=txSiVtX6VJE&t=14s

Մեր ձգտումներն ու արարքները, վարքն ու հույզերը, դրսևորումներն ու մտահաղացումները կախված են մեր արժեքներից՝ թե ինչին ենք մենք դավանում և ինչով ենք առաջնորդվում: Հենց այս պատճառով էլ ցանկացած ոլորտի դիտարկում անհրաժեշտ է սկսել նախ և առաջ իր արժեքային հենքի և սեփական արժեքային համակարգի համադրմամբ:

ՀՀ կրթական օրենսդրության համաձայն՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, իսկ պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Այս փոփոխությունների ժամանակաշրջանում, երբ ժամանակակից աշխարհը լեփ լեցուն է բազմաթիվ դրական և բացասական դրսևորումներով, յուրաքանչյուրիս համար հրամայական խնդիր է դարձել անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլ նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակության հուզող խնդիրներից մեկն է:

Երեխաները զգացին,թե ինչ է պատերազմը, աղոթեցին առ հայրենիք , առ խաղաղություն ու զինվոր:Նրանց լուսաբացերն սկսվում և ավարտվում էին աղոթքի մրմունջով: Դպրոցականը գիտակցում էր, որ հայրենիքի սահմաններն սկսվում են խրամատից և ամեն ինչից վեր դասեց իր հայրենիքը՝ Հայաստան աշխարհը:

Կրտսեր դպրոցի հիմնահարցերից կարևորագույնը բարոյական ժառանգությունը նոր սերնդին փոխանցելն է և արժեհամակարգի հիմքում նոր արժեքներ սերմանելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտությունը հաստատելը: Ուստի երեխաների մեջ շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:

Դասավանդման ընթացքում ուշադրություն դարձնելով կարևորագույն արժեքների դիտարկմանը, մեր խնդիրն է օգնել աշակերտներին իմաստավորելու այդ արժեքները, կենսափորձի և հարցադրումների միջոցով որոշել ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

Յուրաքանչյուր ուսուցչի պարտականությունն ու նպատակն է իր գործունեության ընթացքում կարողանա ճիշտ ուղղորդել սաների՝ ընկալելու մարդու բարոյական, գեղագիտական, Էկոլոգիական,ընտանեկան, հոգևոր , ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը, արժեհամակարգ զարգացնելու և հումանիստ, հայրենասեր, ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում: Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցումը: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Յուրաքանչյուր հայի համար արժեհամակարգի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ընտանիքն է: Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի վրա ձևավորվում է քաղաքակիրթ հասարակությունը: Մեր մեծ ընտանիքը հայրենիքն է և մեր Երկիր մոլորակը:

Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով

համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Կրթության հիմնախնդիրն է դաստիարակել այնպիսի սան,որ սանը

- լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ
- սիրի , պահպանի բնությունը,շրջապատող աշխարհը
- գիտակցի, որ ինքը բնության մի մասնիկն է և իր արժեհամակարգը ձևավորվում է բնության,հասարակության և բարոյական որակների շրջանակներում:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, էկոլոգիական գիտական նվաճումների համար հոգատար զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի էկոլոգիայի, պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրու-թյունն է: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում:Յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ է մեծանում [1]: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

[1] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի բնության, կենսակերպի և մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այսօրվա սերունդը սեփական մաշկի վրա զգաց պատերազմի արհավիրքը,աղոթեց հայ զինվորի ու հայկական հողի անսասան լինելու համար,սովորեց պայքարել, հասնել խաղաղության,գնահատեց խաղաղության գինը:Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեաքային և ընդհանուր զարգացման խնդիրներ[1]: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա[2]:

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:[3]

Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

1 Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112

2 Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:էջ 112

3 Մուդրիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986 էջ 86

Դպրոցում բնապահպանության և ազգայի արժեհամակարգի ձևավորման համար դրված են հետևյալ հիմնախնդիրները.

1. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

2. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

3. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

4. Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

5. Դաստիարակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

6. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

7. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

8. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

9. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

10. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

11. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

12. Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը,սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

13. Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու , ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու,վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ: Զևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու , վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ:

14. Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի,ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:

15. Զարգացնել սովորողների զգայական ընկալման,մտավոր ր հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն,կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում,համադրում ր այլն):

Մենք կատարել ենք բազմաթիվ հետազոտական աշխատանքներ և էքսկուրսիաներ,ուր աշակերտները բացահայտեցին նոր երևույթներ,գաղափարներ, բնության օրենքներ: Հայրենի գյուղը բաց թանգարան էր նրանց առաջ և անխնա հյուրասիրեց իր բարիքներով՝ բերքով, մշակույթով, ազգային գաղափարներով, հնություններով, պատմական անցյալով, մտքի թռիչքով... Սաներս հոգու անտեսանելի թևերով արծվի թևեր առան ու վերից տեսան իրենց Շնողը և կաղնու նման ավելի խոր արմատներ տարածեցին հայրենի հողում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է բնության և ազգային արժեհամակարգի ձևավորման մասին:Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները :Դպրոցում սովորողները ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: :Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա: Այստեղ կարևոր է այն անկյունը, ուր նա ապրում է,սովորում, ստեղծում իր փոքրիկ մոլորակը՝բնությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխան վաղ հասակից արդեն ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը, հետևաբար ընդունակ է պատկերացնելու բնության ամբողջականությունը, բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները: Երեխաների բնության հետ անմիջական շփումը նրանց սովորեցրեց շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանեց շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ երեխան կառուցեց իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումները, զգացողությունները, մտքերի և նախասիրությունների շրջանակը:Երեխայի մեջ քայլ առ քայլ ձևավորվեց այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ , և բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ, և դրանք բոլորը փոխկապակցված են: Այս և նմանատիպ հետազոտությունները վկայում են այն մասին, որ մենք՝ տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտությունն ընտրած անձինք, մեծ մասամբ մանկավարժության նվիրյալներ են:Մենք ձևավորում են երեխաների կրթության հիմքերը և մտահոգ են նրանց կայացման խնդրով:

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի.

- հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- ունենա ազգային ինքնագիտակցություն
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը
- ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում
- գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը
- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը
- գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Երեխան ճանաչեց իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվում այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ եւ անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային,շրջակա աշխարհին և այլ ուսումնական առարկաների: Շատ կարևոր է ի նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները եւ հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

Այսօր կրթության նպատակը մարդուն իր ներսում կարգուկանոնով դարձնելն է, ինչպես նաև ընտանիքի, հասարակության, ազգի և աշխարհի կանոնավոր միավորը: Այսօրվա արագընթաց աշխարհում, որտեղ հասարակության աննախադեպ փոփոխություններ են տեղի ունենում, մենք կլանել ենք դարաշրջանի առանձնահատկությունները և մեծ չափով շեղվել ենք ճիշտ ուղուց: Խոր արմատացած արժեքները, գաղափարները, վերաբերմունքը, հույսերն ու ձգտումները բոլորն էլ ենթարկվել են ծովային փոփոխության: Երեխաները նույնպես անմասն չեն մնացել: Սակայն պետք է հպարտանալ մեր աճող սերունդով,ով կառուցում է Ապագայի իր փոքրիկ Մոլորակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

2. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

3. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986

4. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, 2004:

5. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010:

6. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ մանկավարժների համար, Երեւան, 2005:

7. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, Երեւան, 2001:

8. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար, Այռեքս, Երեւան, 2001:

9. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն.

Տողանյան, Լ. Ավագյան

10. «Բնության պահպանության հիմունքներ» Է. Մ. Հայրապետյան

11. «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը» Բնության համաշխարհային հիմնադրամ